ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<15>> փետրվարի 2013թ. N 119-Ա

ք. Արմավիր

ՍԻԼՎԱ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և հիմք ընդունելով <<Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նախագահի 2013 թվականի հունվարի 31-ի գրությունը.

որոշում եմ՝

1. <<Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ընտրված տնօրեն Սիլվա Մկրտումյանի հետ 2013 թվականի փետրվարի 15-ից կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ**